ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ
ԽՈՐՀՈՒՐԴ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀԻ 29.07.2026 ԹՎԱԿԱՆԻ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹ ՀԱՐՈՒՑԵԼԸ ՄԵՐԺԵԼՈՒ ՄԱՍԻՆ ԹԻՎ 612-Ա ՈՐՈՇՄԱՆ ԴԵՄ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (**այսուհետ նաև՝ Պալատ**) խորհուրդը՝ նախագահությամբ էմին Բեգլարյանի, խորհրդի անդամներ՝ Պավել Գյուլումյանի, Ռոման Ահարոնյանի, Թամարա Բաղդասարյանի, Դավիթ Մելքոնյանի, Լիլիթ Ղազանչյանի, Դավիթ Վարդիկյանի, Ռուբեն Հակոբյանի և Ցոլակ Մարգարյանի.

գրավոր ընթացակարգով քննության առնելով քաղաքացի Վիկտորիա Հայրապետյանի բողոքը (մուտք՝ 06.08.2026թ. № 2286-26) Պալատի նախագահի 29.07.2026 թվականի թիվ 612-Ա որոշման դեմ,

Պ Ա Ր Զ Ե Ց՝

1. **<u>Գործի նախապատմությունը</u>**.

Քաղաքացի Վիկտորիա Հայրապետյանը ***(այսուհետ նաև՝ Բողոքաբեր)***, դիմելով Պալատ, հայտնել է, որ փաստաբան Արսեն Մեսրոպյանը ***(այսուհետ նաև՝ Փաստաբան)*** Պալատի կարգապահական հանձնաժողովի ***(այսուհետ նաև՝ Հանձնաժողով)*** կողմից ենթարկվելով կարգապահական պատասխանատվության՝ արհամարհել է այն, ինչպես նաև փաստաբանի կարգավիճակի հետ անհամատեղելի կոպիտ ֆինանսական և հարկային իրավախախտումների հատկանիշներ ունեցող գործողություններ է կատարել:

Մասնավորապես նշել է, որ Փաստաբանը շուրջ երեք ամիս առաջ կարգապահական պատասխանատվության ենթարկված լինելով հանդերձ՝ դիտավորյալ խուսափում է վերադարձնել 300.000 ՀՀ դրամ գումարը, որի դիմաց ծառայություն չի մատուցել: Նշել է, որ նշված 300.000 ՀՀ դրամ գումարն առաջացել է փոխկապակցված երկու պայմանագրերից, որոնցից մեկը կնքել է Արսեն Մեսրոպյանի (100.000 ՀՀ դրամի չափով), իսկ մյուսը՝ «Արխիստրատեգ Ներսես» խորհրդատվական կենտրոն ՍՊԸ-ի (այսուհետև նաև՝ Ընկերություն) հետ (200.000 ՀՀ դրամի չափով): Երկու պայմանագրերի առարկան

նույնն է եղել և ծառայությունները չեն մատուցվել:

Բողոքաբերը հայտնել է նաև, որ, չնայած կատարված աշխատանքների իսպառ բացակայությանը, Փաստաբանը միանձնյա դուրս է գրել հաշվարկային փաստաթուղթ, հաշիվ-ապրանքագիր, հարկային հաշիվ, պայմանագրի գումարի չափով և այս փաստաթղթերը թաքցվել են իրենից որպես ծառայությունների սպառողից և այս ամենի մասին իրեն հայտնի է դարձել միայն Պետական եկամուտների կոմիտեին պաշտոնական հարցման պատասխանը ստանալու արդյունքում: Իր հերթին Ընկերությունը ստացածված 200.000 ՀՀ դրամի համար ընդհանրապես հաշիվ-ապրանքագիր դուրս չի գրել, ինչը պաշտոնապես հաստատված է ՊԵԿ-ի կողմից տրամադրված փաստաթղթով, որը Բողոքաբերը կցել է բողոքին:

2026 թվականի հունիսի 20-ին Բողոքաբերի կողմից էլեկտրոնային փոստի միջոցով Փաստաբանի և Ընկերության հասցեին պաշտոնապես ուղարկվել է դատական հայցին նախորդող պահանջագիր: Փաստաբանը ներկայացրել է պատասխան առ այն, որ կվերադարձնի միայն 100 հազար ՀՀ դրամը՝ առանց տույժերի: Ինքն առարկել է դրան, ինչին ի պատասխան՝ Արսեն Մեսրոպյանը նշել է, որ չի վերադարձնելու գումարի մնացած մասը:

20.07.2026թ. Բողոքաբերը բողոքի լրացում է հասցեագրել Պալատին՝ հայտնելով, որ իր կողմից ՀՀ ազգային անվտանգության ծառայություն է ուղարկվել ձայնագրություն, որով Փաստաբանը դրական է արտահայտվել կեղծ ամուսնալուծության վճիռ կայացրած դատավորի մասին: Հայտնել է նաև, որ ՀՀ ազգային անվտանգության ծառայությունն իր կողմից ներկայացված փաստաթղթերն ուղարկել է ՀՀ գլխավոր դատախազություն՝ սահմանված կարգով ընթացքը լուծելու համար:

Վերոգրյալի հաշվառմամբ, Բողոքաբերը խնդրել է պարտավորությունների տևական չկատարման, ֆինանսական փաստաթղթեր թաքցնելու, վստահորդին մոլորության մեջ գցելու և հոգեբանական ճնշում գործադրելու համար կարգապահական պատասխանատվության ենթարկել Արսեն Մեսրոպյանին, մասնավորապես՝ դադարեցնել նրա արտոնագրի գործողությունը:

Պալատի նախագահը, 29.07.2026 թվականի թիվ 612-Ա որոշմամբ **(այսուհետև նաև՝ Որոշում)** փաստաբան Արսեն Բենիկի Մեսրոպյանի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելը մերժել է՝ նույն փաստաբանի նկատմամբ նույն արարքի համար կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի մասին որոշման առկայության, ինչպես նաև Փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքի բացակայության հիմքերով:

2. **ՀՀ փաստաբանների պալատի նախագահի** 29.07.2026 **թվականի թիվ** 612-**Ա որոշման էությունը**.

Պալատի նախագահի Որոշմամբ արձանագրվել է, որ Բողոքաբերն ըստ էության

Փաստաբանին վերագրում է Պալատի կարգապահական հանձնաժողովի որոշման չկատարման, չմատուցված ծառայության դիմաց վճարված գումարի հետ վերադարձից հրաժարման, առանց իրեն տեղեկացնելու Պետական եկամուտների կոմիտեի համակարգով հարկային հաշվի դուրսգրման, ինչպես նաև իրեն մոլորության մեջ գցելու և հոգեբանական ճնշում գործադրելու վարքագիծ:

Դիմումի և առկա ապացույցների հաշվառմամբ Պալատի նախագահի Որոշմամբ արձանագրվել է, որ Փաստաբանն արդեն իսկ ենթարկվել է կարգապահական պատասխանատվության Բողոքաբերին բարեխիղճ իրավաբանական ծառայություն չմատուցելու, հանձնարարության կատարման ընթացքի մասին չտեղեկացնելու և նրան հետաքրքրող հարցերին չպատասխանելու, ինչպես նաև փաստացի չկատարած աշխատանքի դիմաց ստացված գումարը հետ չվերադարձնելու համար և Օրենքի 39.3-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի հիմքով Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի հարուցումը ենթակա է մերժման:

Պալատի նախագահի որոշման համաձայն՝ Պալատը չունի որևէ իրավասություն կամ գործիքակազմ՝ քննության առնելու առևտրային կազմակերպությունների կողմից թույլ տրված ենթադրյալ հարկային կամ պայմանագրային խախտումները: Հետևաբար՝ Ընկերության և Բողոքաբերի միջև կնքված պայմանագրից բխող հարաբերությունները, ինչպես նաև Ընկերության կողմից թույլ տրված ենթադրյալ հարկային իրավախախտումները չեն կարող քննության առարկա դառնալ սույն վարույթի շրջանակներում և, առավել ևս, չեն կարող վերագրվել փաստաբան Արսեն Մեսրոպյանին:

Ինչ վերաբերում է գումարի վերադարձի հետ կապված հարաբերություններին՝ Պալատը հարկ է համարել հավելել, որ դրանք այլևս Պալատի լուծման ենթակա հարցերի տիրույթում չեն և կարող են հանդիսանալ քաղաքացիական օրենսդրության կարգավորման առարկա:

Մոլորության մեջ գցելու և հոգեբանական ճնշում գործադրելու՝ Փաստաբանին վերագրվող վարքագծի վերաբերյալ Պալատն արձանագրել է, որ դիմումով չեն ներկայացվել այնպիսի ապացույցներ, որոնք կարող են առերևույթ հիմք հանդիսանալ Փաստաբանի կողմից Օրենքի կամ փաստաբանի վարքագծի կանոնագրքի կանոններին հակասող վարքագիծ դրսևորած լինելու մասին հիմնավորված ենթադրություն կատարելու համար, ուստի այս մասով ևս կարգապահական վարույթի հարուցումը ենթակա է մերժման:

20.06.2026թ. բողոքի լրացման կապակցությամբ Պալատը նշել է, որ դրանում առկա փաստաթղթերը Բողոքաբերի կողմից ՀՀ դատախազություն կամ ՀՀ ազգային անվտանգության ծառայություն ուղարկված լինելու հանգամանքն ինքնին չի կարող դիտարկվել որպես Փաստաբանի կողմից Օրենքի կամ Կանոնագրքի նորմերի խախտում:

Վերոգրյալի հաշվառմամբ, Պալատն արձանագրել է, որ դիմումում մատնանշված հանգամանքները չեն կարող առերևույթ հիմք հանդիսանալ Փաստաբանի կողմից Օրենքի

կամ փաստաբանի վարքագծի կանոնագրքի կանոններին հակասող վարքագիծ դրսևորած լինելու մասին հիմնավորված ենթադրություն կատարելու համար, ուստի այդ հիմքերով կարգապահական վարույթի հարուցումը ենթակա է մերժման:

3. **Բողոքաբերի հիմնավորումները և պահանջը**.

Բողոքաբերը Պալատի նախագահի Որոշման դեմ 06.08.2026 թվականին Պալատի խորհուրդ (**այսուհետև՝ Խորհուրդ**) ներկայացրել է բողոք՝ հղում կատարելով իր նախկին դիմումների շրջանակներում նկարագրված հանգամանքներին՝ ըստ էության պնդելով նույն դիրքորոշումը:

Մասնավորապես, Բողոքաբերը վիճարկել է Օրենքի 39.3-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի դրույթի հիմքով Փաստաբանի կարգապահական վարույթի հարուցման մերժումը:

Բողոքաբերը նշել է, որ ինքը նոր հանգամանքներ է վկայակոչել դիմումով, որոնք վերաբերում են Փաստաբանի կողմից շահերի բախման փաստը թաքցնելուն, դատավարական հակառակորդի հետ գաղտնի կապի և իր նկատմամբ դավաճանական քայլի մասին, ինչը խաթարում է փաստաբանության հեղինակությունը:

Բողոքաբերը խնդրել է բեկանել Որոշումը, ընդունել տրամադրված ձայնային հաղորդագրությունը որպես անհերքելի ապացույց և հարուցել կարգապահական վարույթ Փաստաբանի նկատմամբ:

4. **Փաստաբանի համառոտ դիրքորոշումը**.

Փաստաբանից Պալատը բացատրություն չի պահանջել:

5. **Բողոքի քննության համար նշանակություն ունեցող հանգամանքները**.

Ներկայացված բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. Բողոքաբերը 04.09.2024թ. «Արխիստրատեգ Ներսես» խորհրդատվական կենտրոն ՍՊԸ-ի հետ կնքել է փաստաբանական ծառայությունների մատուցման պայմանագիր, որի գինը կազմել է 200.000 ՀՀ դրամ գումար: ***Նշված փաստը հաստատվում է*** *Բողոքաբերի բացատրությամբ և 04.03.2026թ. թիվ ԿԳ-25086-2-Ա որոշմամբ:*

2. Բողոքաբերը 04.09.2024թ. Փաստաբանի հետ կնքել է փաստաբանական ծառայությունների մատուցման պայմանագիր, որի գինը կազմել է 100.000 ՀՀ դրամ գումար: ***Նշված փաստը հաստատվում է*** *Բողոքաբերի բացատրությամբ և 04.03.2026թ. թիվ ԿԳ-25086-2-Ա որոշմամբ:*

3. Փաստաբանի նկատմամբ Վիկտորիա Հայրապետյանի դիմումի հիման վրա 04.03.2026թ. թիվ ԿԳ-25086-2-Ա որոշմամբ կիրառվել է կարգապահական տույժ՝ նկատողություն՝ Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի, ինչպես նաև

Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 3.5.5, 3.6.1 և 3.8.4 (1) ենթակետերի պահանջների խախտման համար: ***Նշված փաստը հաստատվում է*** *Բողոքաբերի բողոքով և 04.03.2026թ. թիվ ԿԳ-25086-2-Ա որոշմամբ:*

4. Արսեն Մեսրոպյանը ձայնային հաղորդագրությամբ հայտնել է Բողոքաբերին, որ Դատավորը հարցաքննվել է քննչական մարմնում և լավ մարդ է: ***Նշված փաստը հաստատվում է*** *Բողոքաբերի բողոքին կից ներկայացված ձայնային հաղորդագրությամբ:*

5. 16.10.2024թ. Արսեն Մեսրոպյանի կողմից ՊԵԿ համակարգով դուրս է գրվել հաշվարկային հաշիվ: ***Նշված փաստը հաստատվում է*** *Բողոքաբերի կողմից ներկայացված ՊԵԿ գրությամբ:*

6. 22.06.2026թ. Դիմողը Փաստաբանին նախապահանջ է ուղարկել՝ 300.000 ՀՀ դրամ վերադարձնելու վերաբերյալ, ինչին ի պատասխան՝ Փաստաբանը գրությամբ հայտնել է, որ պատրաստ է վերադարձնել միայն իր հետ կնքված պայմանագրով վճարված 100.000 ՀՀ դրամը: ***Նշված փաստը հաստատվում է*** *Բողոքաբերի բողոքին կից ներկայացված փաստաթղթերով:*

6. **Պալատի խորհրդի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը**.

Խորհուրդը գտնում է, որ Պալատի նախագահի 29.07.2026 թվականի թիվ 612-Ա որոշումը պետք է թողնել անփոփոխ՝ հետևյալ պատճառաբանությամբ:

«Փաստաբանության մասին» օրենքի (այսուհետև նաև՝ Օրենք) 39.11-**րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝** *բողոքի քննության ժամանակ* ***խորհուրդը բողոքարկվող որոշումը վերանայում է միայն բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում:***

Օրենքի 39.11-**րդ հոդվածի** 9-**րդ մասի համաձայն՝** *Փաստաբանների պալատի նախագահի՝ կարգապահական վարույթ հարուցելը մերժելու մասին որոշման դեմ բողոքի քննությունից հետո խորհուրդը կարող է կայացնել հետևյալ որոշումներից մեկը.*

1) փաստաբանների պալատի նախագահի որոշումն անփոփոխ թողնելու մասին.

2) փաստաբանների պալատի նախագահի որոշումը վերացնելու մասին:

Օրենքի 39-**րդ հոդվածի** 1-**ին մասի համաձայն՝** փաստաբանը ենթակա է կարգապահական պատասխանատվության նույն օրենքի և Փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջները խախտելու համար:

Օրենքի 39.1-**րդ հոդվածի** 1-**ին մասի համաձայն՝** փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմք է, ի թիվս այլնի, օրենքի և (կամ) Փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջների խախտումը, որը կատարվել է դիտավորությամբ կամ կոպիտ անփութությամբ:

Օրենքի 39.3-**րդ հոդվածի** 1-**ին մասի** 1-**ին կետի համաձայն՝** կարգապահական վարույթի հարուցումը մերժվում է, եթե փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերն առերևույթ բացակայում են, իսկ նույն մասի

3-րդ կետի համաձայն՝ կարգապահական վարույթի հարուցումը մերժվում է, եթե նույն փաստաբանի նկատմամբ նույն արարքի համար առկա է կարգապահական վարույթ չհարուցելու, վարույթը կարճելու կամ կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի մասին որոշում:

Բողոքաբերը, վիճարկելով Պալատի նախագահի որոշումը, ըստ էության պնդել է, որ իր կողմից ներկայացված դիմումը վերաբերել է ոչ միայն նախկին կարգապահական վարույթի շրջանակներում արդեն իսկ գնահատված հանգամանքներին, այլև Փաստաբանի կողմից հետագայում դրսևորված վարքագծին և նոր հանգամանքների, մասնավորապես՝ գումարը չվերադարձնելուն, շահերի բախումը թաքցնելուն, դատավարական հակառակորդի հետ գաղտնի կապ ունենալուն, դատավորի վերաբերյալ ձայնային հաղորդագրություն ուղարկելուն, ինչպես նաև հարկային փաստաթղթերի հետ կապված գործողություններին:

Խորհուրդը նախ անհրաժեշտ է համարում տարանջատել Բողոքաբերի կողմից վկայակոչված այն հանգամանքները, որոնք արդեն իսկ գնահատման առարկա են դարձել նախկին կարգապահական վարույթի շրջանակներում, այն հանգամանքներից, որոնք ներկայացվում են որպես նոր և ինքնուրույն կարգապահական խախտման հիմք:

Գործի նյութերից հետևում է, որ Հանձնաժողովի 04.03.2026 թվականի թիվ ԿԳ-25086-2-Ա որոշմամբ Փաստաբանն արդեն իսկ ենթարկվել է կարգապահական պատասխանատվության Բողոքաբերի հետ ունեցած պայմանագրային հարաբերությունների շրջանակներում ոչ բարեխիղճ իրավաբանական օգնություն ցույց տալու, հանձնարարության կատարման ընթացքի մասին չիրազեկելու, ինչպես նաև փաստացի չկատարած աշխատանքի դիմաց ստացված գումարը չվերադարձնելու համար: Հետևաբար, նույն պայմանագրային հարաբերությունից բխող և նախկին կարգապահական վարույթի շրջանակներում արդեն գնահատված՝ չկատարված աշխատանքի դիմաց ստացված գումարը չվերադարձնելու վարքագծի կրկին վկայակոչումը չի կարող ինքնին ձևավորել նույն արարքի վերաբերյալ նոր կարգապահական վարույթ հարուցելու հիմք: Այն հանգամանքը, որ նախկին կարգապահական որոշումից հետո ևս Բողոքաբերը շարունակել է պահանջել գումարի վերադարձը, իսկ գումարը փաստացի չի վերադարձվել, ինքնին չի փոխում նախկինում գնահատված արարքի բնույթը և չի ձևավորում ինքնուրույն նոր կարգապահական խախտման առերևույթ հատկանիշներ: Բացի այդ, գործում առկա նյութերից հետևում է, որ Փաստաբանը հետագայում գրավոր հայտնել է Բողոքաբերին իր հետ կնքված պայմանագրի գնի՝ 100.000 ՀՀ դրամի չափով գումարը վերադարձնելու պատրաստակամության մասին, սակայն Բողոքաբերը չի ընդունել այդ առաջարկը՝ պահանջելով 300.000 ՀՀ դրամի վերադարձ: Նշված հանգամանքը ևս վկայում է, որ կողմերի միջև հետագա տարաձայնությունը վերաբերում է վերադարձման ենթակա գումարի չափին:

Ուստի նշված մասով Պալատի նախագահն իրավաչափորեն կիրառել է Օրենքի 39.3-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով նախատեսված հիմքը:

Միաժամանակ Խորհուրդն անհրաժեշտ է համարում առանձին անդրադառնալ Բողոքաբերի կողմից որպես նոր ներկայացված հանգամանքներին:

Կարգապահական վարույթի հարուցման համար անհրաժեշտ է այնպիսի փաստական տվյալների առկայություն, որոնք առերևույթ հնարավորություն են տալիս ենթադրելու, որ փաստաբանի վարքագծում կարող է առկա լինել Օրենքի կամ Կանոնագրքի պահանջների խախտում: Միայն դիմողի գնահատականը, ենթադրությունը կամ որևէ հանգամանքի նկատմամբ սուբյեկտիվ ընկալումը, առանց այն հաստատող բավարար փաստական տվյալների, կարգապահական վարույթ հարուցելու համար բավարար չէ:

Բողոքաբերը, մասնավորապես, վկայակոչել է Փաստաբանի կողմից շահերի բախումը թաքցնելու, դատավարական հակառակորդի հետ գաղտնի կապ ունենալու և իր շահերին հակասող վարքագիծ դրսևորելու հանգամանքները: Սակայն գործում ներկայացված նյութերը չեն պարունակում տվյալներ այն մասին, թե ինչպիսի շահերի բախում է առկա եղել, ում միջև է այն առաջացել, ինչ գործողությամբ է այն դրսևորվել կամ Փաստաբանն ինչպիսի կոնկրետ գործողություն է կատարել Բողոքաբերի շահերին հակառակ:

Գործին կից ձայնային հաղորդագրությունից հետևում է միայն, որ Փաստաբանը հայտնել է, որ դատավորը հարցաքննվել է քննչական մարմնում և վերջինիս բնութագրել է որպես «լավ մարդ»: Նույնիսկ այդ ձայնագրության բովանդակությունն ամբողջությամբ ընդունելու պայմաններում դրանից առերևույթ չի հետևում ո՛չ շահերի բախման առկայություն, ո՛չ դատավարական հակառակորդի հետ գաղտնի կապ, ո՛չ էլ Բողոքաբերի շահերին հակասող որևէ գործողություն: Հետևաբար ձայնագրության ապացուցողական նշանակության հարցը տվյալ դեպքում որոշիչ չէ, քանի որ դրանով հաստատվող հանգամանքն ինքնին չի ձևավորում կարգապահական խախտման առերևույթ հատկանիշ:

Անդրադառնալով հարկային փաստաթղթերի վերաբերյալ Բողոքաբերի պնդումներին՝ Խորհուրդն արձանագրում է, որ գործում առկա նյութերից հետևում է՝ Արսեն Մեսրոպյանի կողմից ՊԵԿ համակարգով դուրս է գրվել հաշվարկային փաստաթուղթ, իսկ «Արխիստրատեգ Ներսես» խորհրդատվական կենտրոն ՍՊԸ-ի կողմից նման փաստաթուղթ չի դուրս գրվել:

Հարկային փաստաթղթի դուրսգրման իրավաչափության գնահատումը վերաբերում է հարկային օրենսդրության կիրառման ոլորտին և ինքնին դուրս է Պալատի կարգապահական իրավասության շրջանակից:

Ինչ վերաբերում է «Արխիստրատեգ Ներսես» խորհրդատվական կենտրոն ՍՊԸ-ի հետ կնքված պայմանագրին և վերջինիս կողմից ենթադրյալ պայմանագրային կամ հարկային խախտումներին, ապա նշված ընկերությունն ինքնուրույն իրավաբանական անձ

է և կարգապահական պատասխանատվության սուբյեկտ չի հանդիսանում:

Խորհուրդն անդրադառնում է նաև Բողոքաբերի կողմից ՀՀ ազգային անվտանգության ծառայություն և ՀՀ գլխավոր դատախազություն դիմելու հանգամանքին: Անձի կողմից իրավապահ մարմին դիմելու կամ ներկայացված նյութերը մեկ պետական մարմնից մյուսին ուղարկվելու փաստն ինքնին չի հաստատում դիմումում նշված անձի կողմից իրավախախտում կատարելու հանգամանքը և, համապատասխանաբար, չի կարող ինքնուրույն հիմք հանդիսանալ Փաստաբանի կողմից Օրենքի կամ Կանոնագրքի պահանջների առերևույթ խախտում արձանագրելու համար:

Այսպիսով, Խորհուրդն արձանագրում է, որ Պալատի նախագահը կայացրել է պատճառաբանված և իրավաչափ որոշում, իսկ բողոքում նշված հիմնավորումները բավարար չեն այն վերացնելու համար:

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով «Փաստաբանության մասին» Օրենքի 10-րդ հոդվածի 1-**ին մասի**, 39.11-**րդ հոդվածի** 3-**րդ մասի և** 9-**րդ մասի** 1-**ին կետի պահանջներով**,

Խորհուրդը՝

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1. ՀՀ փաստաբանների պալատի նախագահի 29.07.2026 թվականի «Փաստաբան Արսեն Մեսրոպյանի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու հարցը քննարկելու մասին» թիվ 612-Ա որոշման դեմ Վիկտորիա Հայրապետյանի կողմից 06.08.2026 թվականին ներկայացված բողոքը մերժել:
2. Անփոփոխ թողնել ՀՀ փաստաբանների պալատի նախագահի 29.07.2026 թվականի թիվ 612-Ա որոշումը:
3. Հանձնարարել Պալատի աշխատակազմի ղեկավարին՝ սույն որոշման մասին իրազեկել կողմերին:

Ծանոթություն. Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում այն ստանալու օրվան հաջորդող օրվանից:

ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի
կարգապահական գործով
նիստը նախագահող՝ **Էմին Բեգլարյան**

07 սեպտեմբերի, 2026թ.
թիվ ԿԳ/27-Ա
ք. Երևան